Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Օրինակելի ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 08-06-2020 թ. որոշմամբ
«ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
հիմնադրամի 2019 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		«ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ՎԱԶԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ 6
1.3 Պետական գրանցման համարը		222.160.01277
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2010-10-29
1.5 ՀՎՀՀ-ն		02710011
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)10592572
		+(374)77334270
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		
1.8 Էլեկտրոնային փոստը		himnadramcba@gmail.com
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Էդգար Սարգսյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	1	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը	0	
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ	0	
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ծրագրի անվանումը	8.3 Չափը
8.1.1 Պետական և հայմայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Ներդրված ավանդների և բանկային հաշիվներում առկա մնացորդների դիմաց հաշվեգրված տոկոսներ	241546938

Digitally signed by
ZURABYAN LUSINE
6812760536
Date: 2020.06.09
13:02:29 AMST

	Տրամադրված փոխառության դիմաց հաշվեգրված տոկոսներ	48000000
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ	0	
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Տնտեսական հետազոտություն, ուսումնասիրություն	111350000	
Կրթական և այլ ծրագրերի իրականացման համար շնորհներ և նվիրաբերություններ	12500000	
Ուսման վարձ	3574000	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	191773406	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	127424000	

Նշումներ՝

Կից ներկայացվում է աուդիտորական եզրակացությունը՝ 3 թերթից:
թերթերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Ոչ նյութական ակտիվներ		20	39
		20	39
Ընթացիկ ակտիվներ			
Ավանդներ առևտրային բանկերում	4	2,709,378	2,681,157
Տրամադրված փոխառություններ	5	475,925	466,590
Տրված կանխավճարներ		-	6,625
Մնացորդներ բանկերում		93,492	57,185
		3,278,795	3,211,557
Ընդամենը ակտիվներ		3,278,815	3,211,596
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ակտիվներին վերաբերող շնորհներ	6	20	39
Հետաձգված եկամուտ	7	3,000,000	3,000,000
		3,000,020	3,000,039
Ընթացիկ պարտավորություններ			
Կրեդիտորական պարտքեր	8	30,492	61,258
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություն		11,976	13,944
		42,468	75,202
Զուտ ակտիվներ			
Կուտակված արդյունք		236,327	136,355
		236,327	136,355
Ընդամենը զուտ ակտիվներ և պարտավորություններ		3,278,815	3,211,596

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2020թ. ապրիլի 2-ին:

Էդգար Սարգսյան
Տնօրեն

Լուսինե Զուրաբյան
Գլխավոր հաշվապահ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 26-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Տնտեսագիտության գծով ... ...

Եկամուտների և ծախսերի մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Շնորհներից եկամուտ		19	20
Այլ եկամուտ		2,180	-
Ֆինանսական եկամուտ	9	289,547	286,994
		291,746	287,014
Ծրագրային ծախսեր	10	(127,424)	(261,519)
Հատուցումներ աշխատակիցներին		(4,541)	(5,062)
Այլ գործառնական ծախսեր		(1,900)	(17,006)
		(133,865)	(283,587)
Արդյունք մինչև հարկերը		157,881	3,427
Շահութահարկի գծով ծախս	11	(57,909)	(57,399)
Տարվա արդյունք		99,972	(53,972)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		99,972	(53,972)
Զուտ ակտիվները տարվա սկզբին		136,355	190,327
Զուտ ակտիվները տարվա վերջին		236,327	136,355

Եկամուտների և ծախսերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 26-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Grant Thornton

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
ՀՀ, ք.Երևան 0012
Վաղարշյան 8/1
Հ. + 374 10 260 964
Ֆ.+ 374 10 260 961

Grant Thornton CJSC
8/1 Vagharshyan Str.
0012 Yerevan, Armenia
T + 374 10 260 964
F + 374 10 260 961

«Տնտեսագիտական կրթության և հետազոտությունների աջակցման կենտրոն» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Տնտեսագիտական կրթության և հետազոտությունների աջակցման կենտրոն» հիմնադրամ (Հիմնադրամ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա եկամուտների և ծախսերի մասին հաշվետվությունը, զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով՝ կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Հիմնադրամի՝ 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի»* (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Հանգամանքի շեշտադրում

Մենք ուշադրություն ենք հրավիրում ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 13-ի վրա, որտեղ ներկայացված է COVID-19-ի ազդեցությունը: Մեր կարծիքը չի ձևափոխվել այս հանգամանքի առնչությամբ:

Grant Thornton

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Հիմնադրամի գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված իրավասու մարմինը մտադիր է լուծարել Հիմնադրամը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին ՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

Grant Thornton

- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Արմեն Հովհաննիսյան
Տնօրեն

Լիլիթ Արաբաջյան, FCCA
Առաջադրանքի պատասխանատու

2 ապրիլի 2020թ.

«ԳՐԱՆԹ ԹՈՐՆԹՈՆ» 00040569

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 08.06.2020 20:56